



**ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐԺ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ Ս. ՕԺՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔԻՍԵԴԵԿԻ ՆԵՐԿԱՅՆՑՈՒՑԻՁ
ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ԵՓՐԵՄԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ**

(Ասված Նորին Ս. օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Կարողիկոսի
օծման և գահակալության առթիվ)



Նորին Սրբազնություն միառուպոլիտ եփրեմը
կարդում է իր սղջույնի խոսքը

Ձերդ Սրբություն՝ մեծ Հայաստանի հա-
վատացյալ ժողովրդի մեծ Հովիվապետ-Կա-
թողիկոս, պատվարժան հասարակություն,
Համազգային եկեղեցական ժողովի արդո
պատգամավորներ և այս հանդեսին հրա-
վիրված հյուրեր:

Միլանոյի էդիկտը սահմանափակեց քրիս-
տոնեության կրած նեղությունները՝ հայտա-
րարելով քրիստոնեությունը որպես պետա-
կան կրոն: Եվ այն օրից մինչև այսօր, երկու
եղբայրների՝ Հայոսի և Քարթլոսի հաջորդ-
ները իրենց ձեռքն առան Քրիստոսի կենդա-
նարար խաչը և մինչև այսօր հաստատուն
կերպով պահում են այն իրենց ձեռքում:

Քրիստոսի ուսմունքը՝ «Յայսմ գիտասցեն
ամենեքեան, եթէ իմ աշակերտք էք, եթէ սի-
րեցէք զմիմեանս», — կերպարանափոխեց մեր
ազգերը, հայերի և վրացիների բաժան-բա-
ժան տոհմերը իրար միացրեց, ֆիզիկապես
ամրապնդեց, հոգեպես վերածնեց ու բարձ-
րացրեց, և հայերն ու վրացիները ստեղծեցին
այն ժամանակվա ուժեղ և ամրակուռ իրենց
պետությունները: Մեր ազգերը, իմ սիրելի-
ներ, արվեստների հինգ ճյուղերում էլ՝ պոե-
զիայի, գրականության, ճարտարապետու-
թյան, երաժշտության և նկարչության բնա-
գավառներում, դեռ վաղ ժամանակից տո-
նեցին, այլևայլ ազգերի հետ համեմատած,
իրենց մեծագույն, այսպես կոչված, ոսկե-
դարը և համարձակ կերպով մտան համաշ-
խարհային մեծ ընտանիքը իրենց լուսավոյ,
իրրև հավասարների՝ հավասարների մեջ:

Հայը և վրացին մի ձեռքին խաչ էին բռնել,
մյուսում՝ սուրբ և դրանցով էին պաշտպա-
նում իրենց Հայրենիքը, հավատը, ազգը և

ազգային կուլտուրան... դրանցով էին դիմադրում ազդեցությունների՝ արաբների, մոնղոլների, թյուրք-սելջուկների, տաճիկների և պարսիկների հորդանքների ներխուժումներին:

Մարդկային միտքը մնում է զարմացած պատմական փաստի առջև, թե այս անհամեմատ փոքրիկ ազգերը՝ հայերն ու վրացիները՝ ինչպե՞ս հաջողեցրին պահպանել իրենց Հայրենիքը, հավատն ու ազգը այս մեծ ու հզոր մահմեդականության օվկիանոսում և կող չգնացին նրան այն ժամանակ, երբ ավելի մեծ պետություններ՝ Մարաստանը, Բաբելոնը, պարսկական մեծ կայսրությունը և ուրիշներ կործանվեցին և վերացան երկրի երեսից...:

Հայաստանի Մայր Եկեղեցու կրթքով են սնվել նրա ազգային և հոգևոր կյանքի մեծագույն սյուները հանդիսացող անմահ գործիչները, որոնց անունները՝ Մովսես Խորենացի, Ամատունի, Վարդան Մամիկոնյան, Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի, Գյուտ, Սահակ, Մեսրոպ, Հուսիկ, Խրիմյան Հայրիկ և ուրիշներ, և նրանց թվում՝ վերջին իմաստուն Հովվապետը՝ Գեորգ Զ. հայ ազգի պատմության շղթայում փայլում են որպես փարոս-լուսաստղներ:

Սրանք և սրանց հաջորդները բերին-հասցրին մինչև 20-րդ դարի սկիզբները իրենց մեղրանուշ հայկական մայրենի լեզուն, իրենց ազգային կուլտուրան և Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի մեծ ակտով եղբայրացան լուսավոր, հզոր և խաղաղասեր մեծ Ռուսաստանի մեծ ժողովրդի հետ, և այսուհետև սկսում է մեր քաղաքացիական և եկեղեցական կյանքի նոր դարաշրջանը, այս օրվանից ո՛չ ոք չի կարող ձեռք բարձրացնել մեզ վրա՝ մեր մշտնջենական հովանավոր-պաշտպանը Սովետական մեծ երկիրն է...

Նոր, փայլուն ժամանակաշրջանի ազատ մարդը կերտում է իր նոր կյանքն է՛լ ավելի հոյակապ ու բովանդակալից: Նրան անհրաժեշտ է խաղաղություն, և ո՛վ է քարոզել և քարոզում խաղաղություն այն շափով, որքան Քրիստոնեական Եկեղեցին...

Մեր Քրիստոնեական Եկեղեցին օրական երեք անգամ իր օրհնությունն ու աղոթքն է

առաքում — «Ամբողջ աշխարհի խաղաղության համար, Աստուծո՛ւ Եկեղեցու և բոլոր ազգերի բարօրության համար»... Պատմությունից հայտնի է, որ հայ ազգը երբեք հանգես չի եկել որպես նվաճող ուրիշի հողի և ջրի: Քրիստոնյա հայ ազգը միշտ էլ իր սեփական հողի վրա տարել և տանում է իր խաղաղ և արգասավոր աշխատանքը:

Վեհափառ Տե՛ր, վերածնված դարաշրջանի Հայ հինավուրց Եկեղեցին առաջարկում է Քեզ, հայ ազգի լավագույնների մեջ իր լավագույն զավակին՝ բարձրանալ Հայաստանի Սուրբ և անվանի Եկեղեցու Կաթողիկոսական Աթոռը... «Մի՛ երկնշիր», — երկրային խռովություններն ու պատերազմների հուզումները կգան ու կերթան, սակայն Աստուծո Եկեղեցին անսասան է և հավիտենական:

Ե՛կ և հովվի՛ր Քո հավատացյալ սուրբ ազգը և զարդարի՛ր Քրիստոսի ցույց տված տեղում հիմնադրված Հայաստանի նվիրական Մայր Եկեղեցին՝ էջմիածինը, մտքի և հավատի օրրանը:

Աղերսում եմ Աստուծո Միածին Որդուն, որն անտեսանելիորեն այժմ գտնվում է մեր մեջ, և այն սուրբ կույսերի խմբին՝ Հոփսիմեհին, Գայանեին, Շողակաթին և մայր Նունեին — Վրաստանի Լուսավորչին — Միածին Որդու անունով մեր երկրներում հայտնված, ինչ որ աղերսելու լինես նրանց — աշխարհի համար, Քո Հայրենիքի և Եկեղեցու համար — բարին կատարվի ի փառս Աստուծո, ի բարօրություն վերականգնացած հայրենի Հայաստանի, ի փառս և հարեշատություն Քո:

Վրաստանի Ուղղափառ Եկեղեցու և նրա ղեկավար Սրբազնագույն Կաթողիկոս-Պատրիարք Մելքիսեդեկի անունից, հանձին իմ, այստեղ ներկա գտնվող պատգամավորությունը ողջունում է Հայաստանի Ս. Եկեղեցին և ջերմագին ցանկանում է Հայրենի երկրում և Սփյուռքում ապրող հայերին հաջողություններ: Իսկ նորընտիր Ձերդ Սրբությանը մաղթում ենք արիություն և արեւատություն... Կեցցե՛ք, բախտավոր ժամանակի բախտավոր Վազգեն Կաթողիկոս: (Մատուցում է սրբապատկեր և ողջագուրվում):

